Հաստատում եմ

Տնօրեն ________ Ն. Ջիրոյան

________ 2023թ.

# ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արարատի մարզի Դարբնիկի Ժ. Եսայանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

IX - դասարան

Դասղեկ՝ Կարինա Բեգլարյան

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը )** *Դասարանը բաղկացած է 19 հոգուց: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ջերմ միմյանց հետ: Դասարանում միշտապես տիրում է առողջ մթնոլորտ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն:*

*2.* **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*3.1* **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

**3.2 Գեղագիտական դաստիարակություն** *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն** *Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

**3.6 Բնապահպանական դաստիարակություն** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը զլոբալ է:*

**4. Դպրոց-ընտանիք կապը** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Գիտելիքի և դպրության օր | | աշակերտ դասղեկ |
| II | Հայրենիք, ազգ, մայրենի լեզու | | աշակերտ դասղեկ |
| III | Անկախության անգնահատելի դերն ինձ համար | | աշակերտ դասղեկ |
| IV | Հայկական ավանդույթների պահպանումը մեր ընտանիքում | | աշակերտ դասղեկ |
| V | Ուսուցիչն իմ կյանքում | | աշակերտ դասղեկ |
| VI | Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում | | աշակերտ դասղեկ |
| VII | Ո՞վ է իսկական ընկերը | | աշակերտ դասղեկ |
| VIII | Հայտի մարդկանց կյանքի պատմությունը | | աշակերտ դասղեկ |
| IX | Աշակերտների իրավունքներն ու պարտականություններն դպրոցում | | աշակերտ դասղեկ |
| X | Իմ կարողություններն ու ձեռքբերումները | | աշակերտ դասղեկ |
| XI | Վատ սովորություններ , ինչպե՞ս պայքարել դրանց դեմ | | աշակերտ դասղեկ |
| XII | Նյութապաշտություն և շահ | | աշակերտ դասղեկ |
| XIII | Երկրաշարժի զոհերի հիշատակի օր | | աշակերտ դասղեկ |
| XIV | Հանդուրժողականություն և օրենք | | աշակերտ դասղեկ |
| XV | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում և քննարկում | | աշակերտ դասղեկ |
| XVI | Երկրորդ կիսամյակի անելիքներ, | | աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | կազմակերպչական հարցեր | | դասղեկ |
| XVII | Հայոց բանակ: Հայրենիք , ես մի զարկն եմ քո բազկի | | աշակերտ դասղեկ |
| XVIII | Իմ կատարած լավ գործերը | | աշակերտ դասղեկ |
| XIX | Իմ կատարած ոչ ճիշտ գործերը | | աշակերտ դասղեկ |
| XX | Ներողամտություն, թե՞ վրեժխնդրություն | | աշակերտ դասղեկ |
| XXI | Հ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրը | | աշակերտ դասղեկ |
| XXII | Էկոլոգիական հիմնախնդիրները մեր տարածաշրջանում | | աշակերտ դասղեկ |
| XXIII | Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ | | աշակերտ դասղեկ |
| XXIV | Կանանց միջազգային օր | | աշակերտ դասղեկ |
| XXV | Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ | | աշակերտ դասղեկ |
| XXVI | Ում են տալիս Նոբելյան մրցանակ | | աշակերտ դասղեկ |
| XXVII | ՄԱԿ-ը՝ որպես միջազգային խաղաղարար | | աշակերտ դասղեկ |
| XXVIII | Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով | | աշակերտ դասղեկ |
| XXIX | Ի՞նչ եմ ուզում դառնալ | | աշակերտ դասղեկ |
| XXX | Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր | | աշակերտ դասղեկ |
| XXXI | Աշխատավորների միջազգային օր | | աշակերտ դասղեկ |
| XXXII | Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը | | աշակերտ դասղեկ |
| XXXIII | Ինչպե՞ս հասնել հաջողության | | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում | | աշակերտ դասղեկ |

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Կատարման Ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Դպրոց հաճախելու կանոններ՝ համաճարակային իրավիճակից ելնելով: | դասղեկ | սեպտեմբեր |
| 2 | Կատարել լուրջ դաստիարակչական աշխատանքներ ազգային ոգով դաստիարակելու, գեղագիտական ճաշակ զարգացնելու: | դասղեկ | տարվա ընթացքում |
| 3 | Հրավիրել ծնողական ժողովներ, որտեղ ներկայացվեն աշակերտների և ծնողների հետ կատարվելիք աշխատանքները: | դասղեկ, ծնողներ | ամիսը 2 անգամ |
| 4 | Աշխատանքներ կարգապահական խնդիրներ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ: | դասղեկ, ծնողներ | յուրաքանչյուր ամիս |
| 5 | Այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ և տարիքին համապատասխան թատրոններ: | դասղեկ, աշակերտներ | մարտ, ապրիլ |
| 6 | Համագործակցել առարկայական ուսուցիչների հետ, քննարկել առաջադիմության հարցեր: | դասղեկ | տարվա ընթացքում |
| 7 | Ցուցաբերել օգնություն սոցիալապես անապահով երեխաներին: | դասղեկ, աշակերտներ | տարվա ընթացքում |
| 8 | Հաճախակի կատարել դասալսումներ: | դասղեկ | ամեն ամիս |
| 9 | Ցերեկույթի կազմակերպում և անցկացում: | դասղեկ, աշակերտներ | մայիս |
| 10 | Յուրաքանչյուր ամսվա վերջում ամփոփել առաջադիմությունը և կարգապահությունը: | դասղեկ | յուրաքանչյուր ամիս |